Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2023թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Լենինգրադյան փողոցի հ.16 հասցեում «Երևանտրանս» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքի վարչական շենքում բնակվող թվով 3 ընտանիքներին անհատույց սեփականության իրավունքով նվիրել /օտարել/ Ն. Սիսակյան փողոցի հ.3 շենքից բնակարաններ՝ ըստ կից հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է համայնքային սեփականություն հանդիսացող Լենինգրադյան փողոցի հ.16 հասցեում գտնվող վարչական շենքի տարածքում բնակվող թվով 3 ընտանիքներին անհատույց սեփականության իրավունքով նվիրել /օտարել/ Ն. Սիսակյան փողոցի հ.3 շենքից 1 սենյականոց բնակարաններ:

Լենինգրադյան փողոցի հ.16 հասցեում գտնվող գույքը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը և Երևանի քաղաքապետի 2023 թվականի հունիսի 9-ի հ.2181-Ա որոշմամբ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է «Երևանտրանս» ՓԲ ընկերությանը:

Ներկայումս «ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության և Երևանի քաղաքապետարանի մինչև 03.02.2023թ. կնքված հ.«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/21» ծածկագրով պայմանագրի համաձայն իրականացվում է Լենինգրադյան փողոց հ.16 հասցեի վարչական շենքի՝ որպես կառավարման կենտրոնի վերակառուցման աշխատանքներ:

Հարկ է նշել, որ կից հավելվածում նշված ընտանիքները դեռևս 1990-ական թվականներից փաստացի բնակվում են վարչական շենքի տարածքում՝ չունենալով տարածքի հատկացման վերաբերյալ իրավահաստատող փաստաթղթեր:

Նշված ընտանիքների առկայությունը հնարավորություն չի տալիս իրականացնել վերոհիշյալ պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջ ծավալով:

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կից հավելվածում նշված ընտանիքները երկար տարիներ փաստացի բնակություն են հաստատել քննարկվող հասցեում /չնայած այն հանգամանքին, որ տարածքը զբաղեցվել է առանց իրավահաստատող փաստաթղթերի/ և չունեն այլ բնակության վայր՝ վերջիններիս բնակարանային խնդիրները լուծելու, ինչպես նաև քննարկվող տարածքը ազատելու և տվյալ գույքի հետ կապված Երևան համայնքի հետագա ծրագրերի իրականացման նպատակով մշակվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
2023 թվականի ----------ի
N ------Ա որոշման

h/h	**Անուն Ազգանուն**	**Տրամադրվող բնակարանի հասցեն**	**Տրամադրվող բնակարանի վկայականի համարը**	**Տրամադրվող բնակարանի մակերես**
1	Սանասար Դալլաքյան Ալվարդ Դալլաքյան	Ն.Սիսակյան փողոց հ.3 շենքի հ.75	հ.07092023-01-0162	40.6քմ սեփականություն 0.92քմ ընդհանուր բաժնային սեփականություն
2	Սաթիկ Աղաբեկյան Անդրանիկ Աղաբեկյան Դանիել Շահբազյան	Ն.Սիսակյան փողոց հ.3 շենքի հ.75/1	հ.07092023-01-0161	38.3քմ սեփականություն 0.92քմ ընդհանուր բաժնային սեփականություն
3	Նունիկ Խալաթյան Դիանա Ալիխանյան Արսեն Ալիխանյան	Ն.Սիսակյան փողոց հ.3 շենքի հ.2	հ.07092023-01-0232	40.41քմ սեփականություն 1.81քմ ընդհանուր բաժնային սեփականություն